Էլ. Փոստ – career@delex.am
Հեռախոս – 041800041
FB messenger – Delex (https://www.facebook.com/delexlegal/)

Դելեքս փաստաբանական գրասենյակը փնտրում է (աշխատանքի է հրավիրում) փաստաբանների: Մենք կարևորում ենք գրասենյակի վաստահորդներին բարձր արդյունավետությամբ և մակարդակով դատական ներկայացուցչություն իրականացումը, և փնտրում ենք փաստաբանների, ովքեր կարող են աջակցել թիմին այս գործում:

ԵԹԵ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ

- Փաստաբանի արտոնագիր,
- Համակարգային և մաթեմատիկական մտածողություն,
- Դատավարական փորձ (ցանկալի է, բայց ոչ պարտադիր),

ինչպես նաև եթե դուք կարևորում եք **ճշտապահությունը** և **բարձր էթիկական ստանդարտները** (փաստաբանական գրասենյակը ուղղակի արգելում է կոռուպցիոն վարքագծի ցանկացած դրսևորում և սուտը), ապա ուրախ կլինենք, եթե միանաք մեր թիմին և համատեղ ջանքերով (անհրաժեշտության դեպքում ստանալով մեր փաստաբանական թիմի պրակտիկ և ակադեմիական աջակցությունը) իրականացնենք հետևյալը.

- Տարբեր դատավարական փաստաթղթերի (հայցեր, բողոքներ, դիրքորոշումներ) **ձևանմուշների մշակում** և արդեն իսկ առկա ձևանմուշների բարելավում և ձևափոխում,
- ՀՀ դատական բոլոր ատյաններում, այդ թվում՝ Սնանկության դատարանում, և հատկապես Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում հաճախորդների շահերի պաշտպանությունը (ներառյալ հաճախորդի անունից մասնակցություն դատական նիստերին ու դատավարական գործողությունների իրականացում),
- Դատական գործերում պարբերաբար առաջ եկող անսպասելի և հետաքրքիր դատավարական ու մարտավարական խնդիրներով պայմանավորված իրավական պաշտպանության ռազմավարության մշակում,
- Օրենսդրական փոփոխություններ պահանջող խնդիրների ուսումնասիրություն ու առաջարկների մշակում, ինչպես նաև գործնական լուծում պահանջող համակարգային խնդիրների վերհանում և առաջարկների մշակում, որոնք ուղղված կլինեն դատական և հարկադիր կատարման վարույթների ընթացքում առաջացող իրավական և գործնական խնդիրների լուծմանը, դատավարական և հարկադիր կատարման գործընթացների արդյունավետության բարելավմանը.
- Օրենսդրական նախագծերի քննարկման մասնակցություն ոլորտային կառույցների ներկայացուցիչների (Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ, այլ մարմիններ), ինչպես նաև ըստ անհրաժեշտության Ազգային ժողովում:

ԻՆՉՈ՞Ւ ԱՇԽԱՏԵԼ ՄԵԶ ՀԵՏ

- Աշխատանքը բազմազան է (ի հակադրություն ոլորտի աշխատանքի մասին առկա ենթադրությանը)
- Մեր թիմը և աշխատանքի ոլորտը անընդհատ ընդլայնվում է և ներառվում են նորանոր նյութահիրավական և դատավարական ինստիտուտներ,
- Ընկերությունը ակտիվորեն ներդնում է **տեխնիկական բազմազան լուծումներ**, ապահովելու ներգրավված փաստաբանների աշխատանքի արդյունավետությունը և փաստաբանի ներգրավածությունը կենտրոնացնելով բուն մասնագիտական աշխատանքում
- **Մեր ընկերությունը վճարում է մրցունակ աշխատավարձ***:

** Աշխատավարձը որոշվում է հարցազրույցի արդյունքներով՝ թեկնածուի կողմից պահանջված գումարի շրջանակներում և որպես այդպիսին բյուջետային սահմանափակում չկա (չկա հաստիքի դրույք կամ ֆիքսված առավելագույն վճար): **Աշխատանքի ընտրության փուլը բարեհաջող անցած թեկնածուներին աշխատանք առաջարկվելու դեպքում աշխատավարձը սահմանվելու է հարցազրույցի ժամանակ հավակնորդի կողմից մատնանշված աշխատավարձը:***

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Դիմողներին անհրաժեշտ է կենսագրությունը (CV) ուղարկել career@delex.am էլ փոստի հասցեին, նամակի առարկայում նշելով ***#delex փաստաբանի աշխատանք***: Դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետն է դեկտեմբերի 29

-ը: Դիմումների ուսումնասիրության արդյունքում կապ կհաստատենք համապատասխանող դիմորդներին՝ հարցազրույցը կազմակերպելու համար, որի արդյունքներով էլ որոշում է ընդունվում աշխատանքի վերջնական առաջարկը ներկայացնելու մասով: Հավելյալ մանրամասներ կարող եք ճշտել հեռախոսազանգով՝ +37460277888 համարով, ինչպես նաև Fb Messenger-ով՝ գրելով **Delex օգտատիրոջը (**https://www.facebook.com/delexlegal**):**

ԴԵԼԵՔՍ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ:

Դելեքս փաստաբանական գրասենյակը զբաղվում է խնդրահարույց (կետանցված) պարտքերի հավաքագրմամբ: Գրասենյակը գործում է «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲ Ընկերության՝ ոլոր-տի երկարամյա (2010 թվականից սկսած) փորձի հիման վրա: Գրասենյակը ծառայություններ է մատուցում ՀՀ-ում գործող մի շարք ֆինանսաբանկային կազմակերպությունների, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, ինչպես նաև ամենատարբեր ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների (մանրամեծածախ առևտուր, տարատեսակ ստանդարտացված ծառայությունների մատուցում և մատակարարում), որոնք կարևորում են պարտքերի հավաքագրման արագ և արդյունավետ ապահովումը:

Դելեքս փաստաբանական գրասենյակը վստահորդների **հիմնական մասի** պարտքերի հավաքագրումը կազմակերպում է անընդմեջ կատարելագործվող **ծրագրային ապահովման և ընթացակարգերի միջոցով**: Միևնույն ժամանակ գրասենյակը կարիք ունի **մշտապես լրամշակել և զարգացնել** առկա տեխնիկական և **իրավական լուծումները, ձևանմուշներն ու ընթացակարգերը,** նվազեցնելով հավաքագրման վրա ծախսվող ժամանակը և հավաքագրման

ընդհանուր ծախսերը, և ապահովելով առավել բարձր հավաքագրման մակարդակը («փակված» գործերի տեսակարար կշիռը):

Առ այսօր ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը տեղի էր ունենում տեխնիկական լուծումների մշակման շնորհիվ (ծրագրային ապահովման տեխնիկական մասի բարելավում): Հաշվի առնելով վարույթում գտնվող գործերի քանակի և տեսակի զգալի աճը, ներառյալ **ոչ ստանդարտ գործերով ներգրավումը,** առաջացել է անհրաժեշտություն **բարելավել իրավական լուծումները – զարգացնել ձևանմուշներ, առանձին իրավական հարցերին տալ լուծումներ, պարբերաբար իրականացնել դատական ներկայացուցչություն, ներկայացնել դիրքորոշումներ առանձին իրավական՝ ոչ ստանդարտ հարցերով, ապահովել վերաքննության և վճռաբեկության կարգով պատշաճ բողոքարկում, հարկադիր կատարման և սնանկության վարույթների ընթացում առաջացող տարբեր իրավական հարցերին ավելի խորքային անդրադարձ կատարել**: Հենց նշված գործառույթները իրականացնում են թիմում ներգրավված **փաստաբանները**: